

**Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 22–ի 2003/122/Եվրատոմ հրահանգ**

**Քարծր ակտիվությամբ, փակ և տիրազուրկ ռադիոակտիվ աղբյուրների վերահսկողության մասին**

Պաշտոնական տեղեկագիր L 346 , 31.12.2003թ. էջ 0057 - 0064

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 31(2) և 32–րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը, որը կազմվել է, Պայմանագրի 31–րդ հոդվածի համաձայն, Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի նշանակած՝ անդամ պետություններում գործող փորձագետների խմբի եզրակացությունը ստանալուց հետո,

Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (1),

Քանի որ

1) Պայմանագրի 30–րդ հոդվածով պահանջվում է, որ Համայնքի տարածքում սահմանվեն հիմնական ստանդարտներ աշխատողների և հանրության առողջությունը իրենցնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանելու համար,

2) Իրենցնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատողների և հանրության առողջության պաշտպանության նպատակով անվտանգության հիմնական ստանդարտները սահմանող՝ Խորհրդի 1996 թվականի մայիսի 13-ի 96/29/Եվրատոմ հրահանգով [2] 1959 թվականից ի վեր շարունակվում է անվտանգության հիմնական ստանդարտները սահմանող հրահանգների շարքը,

3) 96/29/Եվրատոմ հրահանգի 4(1)(ե) հոդվածով պահանջվում է, որ՝ ի թիվս գործունեության այլ տեսակների, արդյունաբերական ռենտգենագրության կամ մշակման կամ բուժման նպատակով մարդկանց հետազոտության կամ ճառագայթահարման համար ռադիոակտիվ աղբյուրների օգտագործման համար առկա լինի նախնական թույլտվություն: Նպատակահարմար է, որ այդ

պահանջը տարածվի բարձր ակտիվությամբ ռադիոակտիվ աղբյուրների ներգրավմամբ գործունեության բոլոր տեսակների վրա, որպեսզի էլ ավելի նվազեցվի նման աղբյուրների հետ կապված պատահարների հավանականությունը,

4) թույլտվության համար պետք է առկա լինեն համապատասխան պայմանները, և ապահովվի աղբյուրների անվտանգ կառավարումը,

5) ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ՄԱԳԱՏԷ) սահմանում է ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրումը կարգավորող կանոնակարգեր, որոնք ներառում են ակտիվության սահմանները կանոնակարգի պահանջների նպատակով, որոնք պետք է ապահովեն համապատասխան բազա սույն Հրահանգի շրջանակներում բարձր ակտիվությամբ փակ ռադիոակտիվ աղբյուրները սահմանելու համար (3),

6) 96/29/Եվրատոմ հրահանգում սահմանվել են բացառություն նախատեսող արժեքները համապատասխան մարմիններին կոնկրետ գործունեության մասին հաշվետվություններ ներկայացնելու համար: Այս արժեքներն այդ հրահանգում սահմանվել են ռիսկի աննշան մակարդակի հիման վրա: Քանի որ սույն Հրահանգի պահանջները չպետք է առողջության համար հնարավոր վնասին անհամաչափ վարչական բեռ ստեղծեն փոքր աղբյուրների տիրապետողների համար, բարձր ակտիվությամբ ռադիոակտիվ աղբյուրների սահմանումը չպետք է տարածվի 96/29/Եվրատոմ հրահանգի՝ բացառություններ նախատեսող դրույթների վրա,

7) անդամ պետությունների միջև փակ աղբյուրների փոխադրումների ժամանակ պետք է պահպանվի «Անդամ պետությունների միջև ռադիոակտիվ նյութերի փոխադրումների մասին» Խորհրդի 1993 թվականի հունիսի 8-ի 1493/93 կանոնակարգով (Եվրատոմ) սահմանված կարգը (4),

8) չնայած Համայնքում և ազգային մակարդակում գործող օրենսդրությունից բխող իրավական պահանջներն ապահովում են առաջնային պաշտպանություն, սակայն բարձր ակտիվությամբ աղբյուրները դեռ պոտենցիալ մեծ ռիսկ են ներկայացնում մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, ինչի հետևանքով պետք է արտադրման պահից մինչև երկարաժամկետ պահման համար օրինականորեն գրանցված տեղակայանքում տեղադրվելու կամ հեռացվելու պահը ենթարկվեն խիստ հսկողության,

9) ճառագայթային վթարների և վնասվածքների կանխարգելման համար պահանջվում է, որ բարձր ակտիվությամբ յուրաքանչյուր աղբյուրի գտնվելու վայրը հայտնի լինի, գրանցվի և ստուգվի աղբյուրի արտադրման կամ Համայնք ներկրման պահից մինչև դրա երկարաժամկետ պահման համար օրինականորեն գրանցված տեղակայանքում տեղադրվելու կամ հեռացվելու կամ Համայնքից արտահանվելու պահը: Բարձր ակտիվությամբ աղբյուրի, օրինակ՝ դրա գտնվելու վայրի կամ օգտագործման հետ կապված փոփոխությունները նույնպես պետք է գրանցվեն և դրանց մասին պետք է ծանուցվի: Ֆիզիկական կամ ֆինանսական դժվարությունները չպետք է խոչընդոտեն նման աղբյուրների պատշաճ կերպով վերաօգտագործմանը, վերամշակմանը կամ հեռացմանը, եթե դրանք չեն օգտագործվում ողջամտորեն կանխատեսելի պայմաններում,

10) պատահաբար ճառագայթման դեպքերի մասին պետք է ծանուցվի իրավասու մարմնին,

11) բարձր ակտիվությամբ աղբյուրների տեղաշարժը Համայնքի ներսում անհրաժեշտ է դարձնում նման աղբյուրների նկատմամբ հսկողության և դրանց մասին տեղեկությունների ներդաշնակեցումը նվազագույն չափանիշների կիրառման միջոցով,

12) փորձը ցույց է տալիս, որ չնայած գոյություն ունեցող կարգավորման պատշաճ մեխանիզմին, բարձր ակտիվությամբ աղբյուրների նկատմամբ հսկողությունն, այնուամենայնիվ, կարող է թուլանալ: Ավելին, անցյալում իրականացված գործունեության հետևանք հանդիսացող տիրազուրկ աղբյուրների գոյությամբ պահանջվում է, որ իրականացվեն կոնկրետ գործողություններ,

13) Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որ բարձր ակտիվությամբ յուրաքանչյուր աղբյուր նույնականացվի, մակնշվի և գրանցվի, և վերապատրաստվեն ու տեղեկացվեն բոլոր նրանք, ովքեր ներգրավված են աղբյուրների օգտագործման գործում: Սակայն գոյություն ունեցող բարձր ակտիվությամբ աղբյուրները արտադրողներից բացի այլ անձանց կողմից մակնշելը փորագրման կամ դրոշմման միջոցով կարող է խնդրահարույց լինել, հետևաբար անհրաժեշտ է խուսափել դրանից: Խորհուրդ է տրվում նաև անհրաժեշտ վերապատրաստում և տեղեկություններ տրամադրել բոլոր նրանց, որոնք կարող են պատահաբար գործ ունենալ տիրազուրկ աղբյուրների հետ,

14) անհրաժեշտ է նաև այս բնագավառում միջազգային համագործակության և տեղեկությունների փոխանակման նպատակով նախատեսել համապատասխան միջոցներ

բարձր ակտիվությամբ տիրազուրկ աղբյուրների հետ աշխատելու համար, ստուգումներ, ինչպես նաև ֆինանսավորում այն դեպքերի համար, երբ հնարավոր չէ որոշել սկզբնական տիրապետողին կամ, որոշելու դեպքում պարզվում է, որ վերջինս անվճարունակ է,

15) անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն սույն Հրահանգի դրույթների խախտումների դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ և ապահովեն այդ պատժամիջոցների իրականացումը: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Նպատակը և գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգը նպատակաուղղված է բարձր ակտիվությամբ փակ ռադիոակտիվ աղբյուրներից և տիրազուրկ աղբյուրներից եկող՝ աշխատողներին և հանրությանը իոնացնող ճառագայթահարումից պաշտպանելուն և հատուկ պահանջներ սահմանելու միջոցով՝ անդամ պետություններում գործող հսկողության մեխանիզմների ներդաշնակեցմանը, ապահովելով, որ նման յուրաքանչյուր աղբյուր հսկողության տակ լինի:

2. Սույն Հրահանգը կիրառվում է 2-րդ հոդվածում սահմանված բարձր ակտիվությամբ աղբյուրների նկատմամբ: Անդամ պետությունները կարող են որոշ աղբյուրների վրա չտարածել սույն Հրահանգի գործողությունը, եթե դրանց ակտիվությունը թուլացել է հասնելով 96/29/Եվրատոմ հրահանգով սահմանված՝ բացառություն նախատեսող մակարդակներից ավելի ցածր ցուցանիշի:

3. Սույն Հրահանգից բխող նվազագույն պարտականությունները լրացնում են 96/29/Եվրատոմ հրահանգով սահմանված պարտականությունները:

## Հոդված 2

### Սահմանումները

Սույն Հրահանգի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

ա) տիրազուրկ աղբյուր՝ փակ աղբյուր, որի ակտիվության մակարդակը դրա հայտնաբերման պահին բարձր է 96/29/Եվրատոմ հրահանգի 3(2)(ա) հոդվածում նշված՝ բացառություն նախատեսող մակարդակից և որը չի գտնվում նորմատիվ հսկողության տակ կամ այն պատճառով, որ երբեք էլ ենթակա չի եղել նորմատիվ հսկողության, կամ այն պատճառով, որ դրանից հրաժարվել են, այն սխալ է տեղադրվել, գողացվել է կամ՝ առանց իրավասու մարմնին ծանուցելու կամ առանց ստացողին տեղեկացնելու, փոխանցվել է նոր տիրապետողի.

բ) բարձր ակտիվությամբ աղբյուր, այսուհետ՝ աղբյուր՝ ռադիոնուկլիդ պարունակող փակ աղբյուր, որի ակտիվությունը արտադրման պահին կամ՝ դրա անհայտ լինելու դեպքում, առաջին անգամ շուկայում հայտնվելու պահին հավասար է I հավելվածում նշված՝ ակտիվության համապատասխան մակարդակին կամ դրանից բարձր է.

գ) գործունեություն հասկացությունն ունի այն նշանակությունը, որը տրվել է նրան 96/29/Եվրատոմ հրահանգում.

դ) թույլտվություն՝ դիմումի հիման վրա իրավասու մարմինների կողմից տրված՝ աղբյուրի հետ կապված գործունեություն իրականացնելու թույլտվություն.

ե) իրավասու մարմին՝ սույն Հրահանգին համապատասխան գործառույթներ իրականացնելու նպատակով անդամ պետության կողմից նշանակված որևէ մարմին.

զ) չօգտագործվող աղբյուր՝ աղբյուր, որն այլևս չի օգտագործվում կամ չի նախատեսվում օգտագործվել այն գործունեության իրականացման նպատակով, որի համար թույլտվություն է տրվել.

է) տիրապետող՝ ազգային իրավունքի համաձայն աղբյուրի համար պատասխանատվություն կրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ աղբյուրի արտադրողները, մատակարարողները և օգտագործողները, բայց ոչ «օրինականորեն գրանցված տեղակայանքները».

ը) արտադրող՝ աղբյուր արտադրող ֆիզիկական կամ իրավաբանական ցանկացած անձ.

թ) օրինականորեն գրանցված տեղակայանք՝ անդամ պետության իրավասու մարմինների կողմից ազգային իրավունքին համապատասխան լիցենզավորված՝ այդ պետության տարածքում տեղակայված կառուցվածք, նախատեսված աղբյուրների երկարաժամկետ պահման կամ հեռացան համար, կամ ազգային իրավունքի համաձայն համապատասխան կարգով լիցենզավորում ստացած տեղակայանք՝ աղբյուրների ժամանակավոր պահման համար.

ժ) ճառագայթահարման ենթարկվող աշխատող՝ ունի այն նշանակությունը, որը տրվել է նրան 96/29/Եվրատոմ հրահանգում.

ժա) փակ աղբյուր՝ ունի 96/29/Եվրատոմ հրահանգով դրան տրված իմաստ և ներառում է, հարկ եղած դեպքում, ռադիոակտիվ նյութը պարփակող պատիճը՝ որպես աղբյուրի անբաժան մաս.

ժբ) մատակարար՝ աղբյուրը մատակարարող կամ այն տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական որևէ անձ.

ժգ) փոխանցում՝ աղբյուրի փոխանցում մեկ տիրապետողից մյուսին.

ժդ) աղբյուրի կոնտեյներ՝ փակ աղբյուրի պաշտպանիչ պատյան, որը չի համարվում աղբյուրի անբաժանելի մաս, բայց նախատեսված է դրա փոխադրման, գործածման համար և այլն:

### Հոդված 3

#### **Թույլտվությունը**

1. Անդամ պետությունները տիրապետողից պահանջում են աղբյուրի հետ կապված ցանկացած գործունեության, այդ թվում՝ աղբյուրը ձեռք բերելու համար ստանալ նախնական թույլտվություն:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ թույլտվությունը տալուց առաջ՝

ա) ապահովվեն համարժեք այն մեխանիզմները, ներառյալ սույն Հրահանգից բխող միջոցները, ուղղված՝ աղբյուրների ապահով կառավարմանը, նաև դրանց անօգտագործելի դառնալու ժամանակ: Այս վերջին մեխանիզմներով կարող է նախատեսվել այս աղբյուրների փոխանցումը մատակարարներին կամ դրանց տեղադրումը օրինականորեն գրանցված տեղակայանքներում

կամ կարող է նախատեսվել այս աղբյուրները ստանալու՝ արտադրողի կամ մատակարարողի պարտականությունը.

բ) նախատեսվեն ֆինանսական ապահովման կամ տվյալ աղբյուրին համարժեք այլ միջոցներ աղբյուրների՝ անօգտագործելի դառնալու դեպքերում, դրանց ապահով կառավարման համար, այդ թվում՝ այն դեպքերում, երբ տիրապետողը դառնում է անվճարունակ կամ դադարեցնում է գործունեությունը:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ թույլտվությամբ սահմանվեն՝

ա) պարտականությունները.

բ) աշխատակազմի նվազագույն որակավորումները, ներառյալ տվյալները և վերապատրաստման մասին տեղեկությունները.

գ) աղբյուրի, աղբյուրի կոնտեյնների և լրացուցիչ սարքավորումների աշխատանքի արդյունավետության չափանիշները.

դ) արտակարգ իրավիճակներում գործելակարգին և կապի միջոցներին ներկայացվող նվազագույն պահանջները.

ե) պահպանման ենթակա աշխատակարգերը.

զ) սարքավորումների, աղբյուրների և կոնտեյներների տեխնիկական սպասարկումը.

է) չօգտագործվող աղբյուրների համապատասխան կարգով կառավարումը, այդ թվում՝ չօգտագործվող աղբյուրները մատակարարին, հարկ եղած դեպքում, մեկ այլ օրինական տիրապետողին կամ օրինականորեն գրանցված տեղակայանք փոխանցելու վերաբերյալ պայմանագրերը:

#### *Հոդված 4*

#### **Փոխադրումները**

Անդամ պետությունները պետք է ստեղծեն համակարգ, որը հնարավորություն կտա համապատասխան կարգով տեղեկացված լինել աղբյուրների առանձին փոխադրումների մասին:

## Հոդված 5

### Հաշվառում

1. Տիրապետողը պետք է իրականացնի իր պատասխանատվության տակ գտնվող բոլոր աղբյուրների, դրանց գտնվելու վայրի և փոխադրումների հաշվառում: Հաշվառման տվյալներում պետք է ընդգրկվեն II հավելվածում սահմանված տեղեկությունները: Այդ տեղեկությունները կարող են լրացվել հաշվառման ստանդարտ թերթիկի վրա, 5-րդ պարբերությանը համապատասխան:

2. Տվյալ անդամ պետության պահանջով, 1-ին պարբերությունում նշված հաշվառման բոլոր տվյալների կամ դրանց մի մասի էլեկտրոնային գրավոր օրինակները տիրապետողը իրավասու մարմիններին է տրամադրում՝

- առանց չհիմնավորված ուշացման՝ հաշվառման վարումը մեկնարկելիս, ինչը պետք է իրականացվի աղբյուրը ձեռք բերելուց հետո հնարավորինս շուտ,

- անդամ պետությունների/իրավասու մարմինների կողմից սահմանած պարբերականությամբ, դրանից հետո ոչ ավելի, քան տասներկու ամիս անց,

- եթե տվյալների թերթիկում նշված տեղեկությունները փոխվել են,

- առանց չհիմնավորված ուշացման՝ կոնկրետ աղբյուրի վերաբերյալ հաշվառման վարումը դադարեցնելիս, երբ տիրապետողն այլևս չի տնօրինում այս աղբյուրը. այդ դեպքում պետք է ներառվի այն տիրապետողի անունը կամ օրինականորեն գրանցված այն տեղակայանքի անվանումը, որին փոխանցվում է աղբյուրը,

- առանց չհիմնավորված ուշացման՝ հաշվառման վարումը դադարեցնելիս, երբ տիրապետողն այլևս չի տնօրինում որևէ աղբյուր և

- իրավասու մարմնի պահանջով:

Տիրապետողի կողմից վարվող հաշվառման տվյալները պետք է ստուգումների նպատակով տրամադրվեն իրավասու մարմիններին:

3. Իրավասու մարմինները վարում են օրինական տիրապետողների և նրանց կողմից տնօրինվող աղբյուրների հաշվառում: Հաշվառման մեջ պետք է ներառվեն տվյալներ ռադիոնուկլիդի, արտադրման պահին առկա ակտիվության կամ՝ ակտիվության մակարդակը



հայտնի չլինելու դեպքում, առաջին անգամ շուկայահանվելու կամ տիրապետողի կողմից աղբյուրը ձեռք բերելու պահի դրությամբ առկա ակտիվության վերաբերյալ, և տվյալներ աղբյուրի տեսակի վերաբերյալ:

4. Իրավասու մարմինները հաշվառումը վարում են թարմացված տվյալներով, հաշվի անելով աղբյուրի փոխանցումները՝ ի թիվս այլ գործոնների:

5. Հանձնաժողովը II հավելվածում սահմանված հաշվառման ստանդարտ թերթիկը հասանելի է դարձնում էլեկտրոնային ձևաչափով:

6. Հանձնաժողովը կարող է, 17-րդ հոդվածով սահմանված կարգով, թարմացնում է II հավելվածով նախատեսված պահանջվող տեղեկությունները և II հավելվածով սահմանված հաշվառման ստանդարտ թերթիկը:

## Հոդված 6

### **Տիրապետողներին ներկայացվող պահանջները**

Աղբյուրների յուրաքանչյուր տիրապետող պետք է՝

ա) ապահովի, որ պարբերաբար անցկացվեն միջազգային չափորոշիչներին համապատասխան թեստավորումներ, օրինակ՝ հոսակորստի մասով թեստավորումներ, յուրաքանչյուր աղբյուրի ամբողջականության ստուգման և պահպանման նպատակով,

բ) կանոնավոր կերպով՝ անդամ պետությունների կողմից սահմանված որոշակի պարբերականությամբ, ստուգի յուրաքանչյուր աղբյուրի՝ համապատասխան դեպքում, աղբյուրը պարունակող սարքի առկա լինելը և ակնհայտորեն լավ վիճակում գտնվելն իր օգտագործման կամ պահման վայրում.

գ) ապահովի, որ յուրաքանչյուր ամրակայված և շարժական աղբյուրի մասով իրականացվի համապատասխան փաստաթղթավորում, օրինակ՝ գրավոր արձանագրություններ և կարգեր, ուղղված աղբյուրից անօրինական կերպով օգտվելու կամ դրա կորստի կամ գողության կամ այն վնասելու դեպքերի կանխմանը.

դ) իրավասու մարմինն անհապաղ տեղեկացնել աղբյուրի կորստի, գողության կամ դրանից անօրինական կերպով օգտվելու ցանկացած դեպքի մասին, նման ցանկացած դեպքից, այդ

թվում՝ հրդեհից հետո, որը կարող է վնասել աղբյուրը, իրականացնել յուրաքանչյուր աղբյուրի ամբողջականության ստուգում և, հարկ եղած դեպքում, այդ մասին և ձեռնարկված միջոցների մասին տեղեկացնել իրավասու մարմնին.

ե) յուրաքանչյուր չօգտագործվող աղբյուր վերադարձնել մատակարարին կամ տեղադրել այն օրինականորեն գրանցված տեղակայանքում կամ փոխանցել այն մեկ այլ օրինական տիրապետողի, եթե իրավասու մարմնի հետ այլ բան չի համաձայնեցված, օգտագործման դադարեցումից հետո՝ առանց չհիմնավորված ուշացման.

զ) ապահովել, որ նախքան փոխանցման իրականացումը ստացող տիրապետողն ունի համապատասխան թույլտվություն.

է) իրավասու մարմնին անհապաղ ծանուցել ցանկացած դեպքի կամ պատահարի մասին, որի հետևանքով տեղի է ունեցել աշխատողի կամ այլ անձի պատահական ճառագայթահարում:

## *Հոդված 7*

### **Նույնականացում և մակնշում**

1. Արտադրողը պետք է նույնականացնի, իսկ Համայնքի սահմաններից դուրս ձեռք բերված աղբյուրների դեպքում՝ մատակարարը պետք է ապահովի, որ յուրաքանչյուր աղբյուր նույնականացվի եզակի համարով: Այս համարը փորագրվում կամ դրոշմվում է աղբյուրի վրա, եթե հնարավոր է:

Այս համարը փորագրվում կամ դրոշմվում է աղբյուրի վրա, եթե հնարավոր է: Եթե դա հնարավոր չէ, կամ վերաօգտագործվող տրանսպորտային կոնտեյներների դեպքում, աղբյուրի կոնտեյների վրա պետք է գոնե տեղեկություններ լինեն աղբյուրի բնույթի վերաբերյալ:

Արտադրողը կամ մատակարարը պետք է ապահովեն, որ աղբյուրի կոնտեյները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև աղբյուրը մակնշված և պիտակավորած լինեն ճառագայթահարման վտանգից մարդկանց զգուշացնող նշանով:

Արտադրողը տրամադրում է արտադրվող յուրաքանչյուր աղբյուրի նախագծային տեսակի աղբյուրի տիպային կոնտեյների լուսանկարը:

2. Տիրապետողն ապահովում է, որ յուրաքանչյուր աղբյուրի հետ լինեն գրավոր տեղեկություններ աղբյուրի՝ նույնականացված և մակնշված լինելու մասին, 1-ին պարբերությանը համապատասխան, և որ 1-ին պարբերությունում նշված մակնշումները և պիտակները մնան ընթեռնելի: Տեղեկություններում պետք է ընդգրկվեն աղբյուրի, աղբյուրի կոնտեյների, փոխադրման փաթեթավորման, համապատասխանության դեպքում՝ սարքի և սարքավորման լուսանկարները:

### Հոդված 8

#### **Վերապատրաստումը և տեղեկատվությունը**

1. 96/29/Եվրատոմ հրահանգի 22-րդ հոդվածի համաձայն ճառագայթահարումից պաշտպանության ոլորտում տեղեկությունների և վերապատրաստման տրամադրումը կազմակերպելիս տիրապետողը պետք է ապահովի, որ նման վերապատրաստումներն ընդգրկեն աղբյուրների անվտանգ կառավարմանը ներկայացվող կոնկրետ պահանջները:

Տեղեկատվության մեջ և վերապատրաստումների ընթացքում պետք է առանձնահատուկ կերպով շեշտադրվեն անվտանգության համար անհրաժեշտ պահանջները և պետք է հատուկ տեղեկություններ տրամադրվեն աղբյուրների նկատմամբ համապատասխան հսկողության կորստի հնարավոր հետևանքների մասին:

Տեղեկատվությունը և վերապատրաստումը պետք է կրկնվեն կանոնավոր պարբերականությամբ և ներկայացվեն փաստաթղթերով՝ աշխատողներին նման միջոցառումներին համարժեքորեն պատրաստելու նպատակով:

Համապատասխան տեղեկատվություն և վերապատրաստում պետք է տրամադրվի նաև ճառագայթահարված աշխատողներին:

2. Անդամ պետությունները պետք է խրախուսեն, որ տիրազուրկ աղբյուրներ հայտնաբերվելու կամ ունենալու հավանականություն ունեցող տեղակայանքների (օրինակ՝ մետաղի ջարդոնի խոշոր հրապարակների և մետաղի ջարդոնի վերամշակման խոշոր գործարանների) ղեկավարները և աշխատողները, ինչպես նաև տարանցման հանգուցային կետերի (օրինակ՝ մաքսակետերի) ղեկավարները և աշխատողները՝

ա) տեղեկացվեն այն հնարավորության մասին, որ նրանք կարող են գործ ունենալ աղբյուրի հետ.

բ) խորհրդատվություն և վերապատրաստում ստանան աղբյուրների և դրանց կոնտեյներների տեսողական հայտնաբերման մասով.

գ) տեղեկացվեն իոնացնող ճառագայթման և դրա ազդեցությունների հիմնական մասին.

դ) տեղեկացվեն այն գործողությունների մասին, որոնք պետք է ձեռնարկվեն աղբյուրի հայտնաբերման կամ հայտնաբերման կասկածի դեպքում, և դրանց մասով վերապատրաստում ստանան:

### *Հոդված 9*

#### **Տիրազուրկ աղբյուրներ**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմինները պատրաստ լինեն, կամ միջոցներ նախատեսեն, այդ թվում՝ պարտականություններ սահմանեն, տիրազուրկ աղբյուրների վերադարձման և տիրազուրկ աղբյուրներից առաջացող ճառագայթային արտակարգ իրավիճակները կառավարելու համար և մշակած ունենան արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման պլաններ ու միջոցառումներ:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ անհապաղ կարգով տեխնիկական խորհրդատվություն և օժանդակություն տրամադրվի այն անձանց, որոնք՝ բնականոն պայմաններում, ներգրավված չեն ճառագայթումից պաշտպանության պահանջներին ենթակա գործողություններում, բայց կասկածներ ունեն տիրազուրկ աղբյուրի գոյության մասին: Խորհրդատվության և օժանդակության առաջնային նպատակը աշխատողներին և այլ անձանց ճառագայթահարումից պաշտպանելը և աղբյուրի անվտանգությունն ապահովելն է:

3. Անդամ պետությունները պետք է խրախուսեն, որ ստեղծվեն համակարգեր տիրազուրկ աղբյուրների հայտնաբերման համար այնպիսի վայրերում, ինչպիսիք են մետաղի ջարդոնի խոշոր հրապարակները և մետաղի ջարդոնի վերամշակման խոշոր տեղակայանքները, որտեղ սովորաբար կարող են տիրազուրկ աղբյուրներ հայտնաբերվել, կամ՝ համապատասխան դեպքերում՝ տարանցման հանգուցային կետերում, ինչպիսիք են մաքսակետերը:

4. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հարկ եղած դեպքում աշխատանքներ իրականացվեն նախկինում իրականացված գործունեության հետևանք հանդիսացող տիրազուրկ աղբյուրների վերադարձման ուղղությամբ:

Այդ աշխատանքներում կարող է ներառվել անդամ պետությունների մասնակցությունը աղբյուրների վերադարձման, կառավարման և հեռացման հետ կապված ծախսերում և կարող է ներառվել նաև մարմինների, օրինակ՝ մաքսատների, և տիրապետողների, օրինակ՝ գիտահետազոտական ինստիտուտների, նյութերի փորձարկման ինստիտուտների կամ հիվանդանոցների արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը:

#### *Հոդված 10*

### **Տիրազուրկ աղբյուրների ֆինանսական ապահովումը**

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ անդամ պետությունների կողմից որոշման ենթակա կարգավորումների հիման վրա, ստեղծվի ֆինանսական ապահովման համակարգ կամ ձևավորվեն այլ համարժեք միջոցներ տիրազուրկ աղբյուրների վերադարձման հետ կապված միջամտությունների ծախսերը ծածկելու համար, որոնք կարող են առաջանալ նաև 9-րդ հոդվածով սահմանված պահանջների կատարման արդյունքում:

#### *Հոդված 11*

### **Միջազգային համագործակցություն և տեղեկությունների փոխանակում**

Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է անհապաղ կարգով տեղեկություններ փոխանակի և համագործակցի այլ անդամ պետությունների կամ երրորդ երկրների և համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ՝ աղբյուրների կորստի, հեռացման, գողության կամ հայտնաբերման և դրանցից բխող հետագա գործողությունների կամ քննությունների կապակցությամբ՝ առանց խախտելու գաղտնիության համապատասխան պահանջները և համապատասխան ազգային կանոնակարգերը:

## Հոդված 12

### Ստուգումները

Սույն Հրահանգին համապատասխան սահմանված դրույթների կատարման նպատակով անդամ պետությունները ստեղծում կամ գործածում են ստուգումների համակարգ:

## Հոդված 13

### Իրավասու մարմինը

1. Անդամ պետությունները նշանակում են իրավասու մարմին՝ սույն Հրահանգին համապատասխան գործառույթներ իրականացնելու նպատակով:
2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են տրամադրում իրավասու մարմնի անվանումը և հասցեն և անհրաժեշտ բոլոր տեղեկությունները նշված մարմինների հետ արագ կապ հաստատելու համար:
3. Եթե անդամ պետություններում կան մեկից ավելի իրավասու մարմիններ, ապա նշանակվում է կոնտակտային մեկ համակարգող՝ մյուս անդամ պետությունների հաղորդակից կողմերի հետ որպես կապող օղակ գործելու համար:
4. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ուղարկում 2-ին և 3-րդ պարբերություններում նշված տվյալների ցանկացած փոփոխություն:
5. Հանձնաժողովը՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում նշված տեղեկությունները տրամադրում է Համայնքի բոլոր իրավասու մարմիններին և պարբերաբար հրապարակում դրանք Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում ոչ ավելի, քան երկու տարվա պարբերականությամբ:

#### Հոդված 14

### **Ձեռք բերված փորձի վերաբերյալ զեկույցը**

Մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը անդամ պետությունները Հանձնաժողովին զեկույց են ներկայացնում սույն Հրահանգի կատարման արդյունքում ձեռք բերված փորձի մասին, այդ թվում՝ դիտարկումներ ցանկացած ազդեցության մասին, որ 1(2) հոդվածը կարող էր ունենալ:

Դրա հիման վրա Հանձնաժողովը զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեին:

#### Հոդված 15

### **Պատժամիջոցները**

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները: Նշված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհանողիչ:

#### Հոդված 16

### **Փոխատեղումը**

1. Սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը անդամ պետությունները գործողության մեջ են դնում մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը:

Առաջին ենթապարբերությունում նշված ժամկետից ավելի շուտ շուկայահանված աղբյուրների կապակցությամբ անդամ պետությունները կարող են նախատեսել հետևյալը՝

ա) 3–6–րդ հոդվածները չեն կիրառվում մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ը,

բ) 7–րդ հոդվածը չի կիրառվում, բացառությամբ հետևյալ պահանջների, որոնք պետք է կիրառության մեջ մտնեն ամենաուշը մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ը՝

- տիրապետողը պետք է ապահովի, որ՝ հնարավորության դեպքում, յուրաքանչյուր աղբյուրի աղբյուրի կոնտեյնների հետ լինեն աղբյուրը և դրա բնույթը նույնականացնող գրավոր տեղեկություններ,

- տիրապետողը պետք է ապահովի, որ յուրաքանչյուր աղբյուր, իսկ հնարավորության դեպքում՝ նաև աղբյուրի կոնտեյները մակնշված լինի ճառագայթահարման վտանգից մարդկանց զգուշացնող նշանով:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում իրենց ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում՝ աղյուսակի հետ միասին, որը ցույց է տալիս, թե սույն Հրահանգի դրույթները ինչպես են համապատասխանում ընդունված ազգային օրենսդրական դրույթներին:

#### *Հոդված 17*

#### **Կոմիտեն**

Հանձնաժողովին՝ 5(6) հոդվածով սահմանված գործառույթների իրականացման գործում աջակցում է անդամ պետությունների ներկայացուցիչներից կազմված Խորհրդատվական կոմիտեն, որը նախագահում է Հանձնաժողովի ներկայացուցիչը:

Հանձնաժողովի ներկայացուցիչ Կոմիտեին է ներկայացնում ձեռնարկվելիք միջոցների նախագիծը: Կոմիտեն տրամադրում է նախագծի վերաբերյալ իր եզրակացությունը այն ժամկետում, որը կարող է սահմանվել նախագահի կողմից ըստ խնդրի հրատապության, անհրաժեշտության դեպքում՝ քվեարկությամբ:

Կոմիտեի եզրակացությունը մուտքագրվում է արձանագրության մեջ. բացի դրանից, յուրաքանչյուր անդամ պետություն իրավունք ունի պահանջելու, որ իր դիրքորոշումը մուտքագրվի արձանագրության մեջ:



Հանձնաժողովը պետք է առավելագույնս հաշվի առնի Կոմիտեի ներկայացրած եզրակացությունը: Այն պետք է տեղեկացնի Կոմիտեին վերջինիս եզրակացությունը հաշվի առնելու եղանակի մասին:

#### *Հոդված 18*

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակման օրը:

#### *Հոդված 19*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի դեկտեմբերի 22-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Ա. Մաթեոլի

1) 2003 թվականի նոյեմբերի 18-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

2) ՊՏ L 159, 29.06.1996թ., էջ 1

3) ՄԱԳԱՏԷ Անվտանգության ստանդարտների շարք, թիվ TS-R-1 (ST, Revised), Վիեննա, 2000թ.

4) ՊՏ L 148, 19.06.1993թ., էջ 1

ՀԱՎԵԼՎԱԾ I

**Ակտիվության մակարդակները**

Ստորև ներկայացված աղյուսակում չթվարկված, բայց 96/29/Եվրատոմ հրահանգի I հավելվածի Ա աղյուսակում նշված ռադիոնուկլիդների համար ակտիվության համապատասխան մակարդակը հավասար է ՄԱԳԱՏԷ-ի՝ ռադիոակտիվ նյութերի ապահով տեղափոխման վերաբերյալ կանոնակարգերում տրված A1 մեծության մեկ հարյուրերորդականին (1):

>ԱՂՅՈՒՍԱԿ<

Տարրը (կարգաթիվը)	Ռադիոնուկլիդ	Ակտիվության մակարդակը (Բկ)
Երկաթ (26)	Fe-55	4 × 10 <sup>11</sup>
Կոբալտ (27)	Co-60	4 × 10 <sup>9</sup>
Սելեն (34)	Se-75	3 × 10 <sup>10</sup>
Կրիպտոն (36)	Kr-85	1 × 10 <sup>11</sup>
Ստրոնցիում (38)	Sr-90 (ա)	3 × 10 <sup>9</sup>
Պալադիում (46)	Pd-103 (ա)	4 × 10 <sup>11</sup>
Յոդ (53)	I-125	2 × 10 <sup>11</sup>
Ցեզիում (55)	Cs-137 (ա)	2 × 10 <sup>10</sup>
Պրոմեթիում (61)	Pm-147	4 × 10 <sup>11</sup>
Գադոլինիում (64)	Gd-153	1 × 10 <sup>11</sup>
Թուլիում (69)	Tm-170	3 × 10 <sup>10</sup>
Իրիդիում (77)	Ir-192	1 × 10 <sup>10</sup>

Թալիում (81)	Tl-204		1 × 1011
Ռադիում (88)	Ra-226	(բ)	2 × 109
Պլուտոնիում (94)	Pu-238	(ա)	1 × 1011
Ամերիցիում (95)	Am-241	(բ)	1 × 1011
Կալիֆոռնիում (98)	Cf-252		5 × 108

(ա) Ակտիվության մակարդակը ներառում է նաև 10 օրվանից պակաս կիսատրոհման պարբերությամբ նուկլիդների արգասիքների ակտիվությունը:

(բ) Ներառում է նեյտրոնների աղբյուրներ՝ բերիլիումով:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԹԵՐԹԻԿ ԲԱՐՁՐ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՄԲ ՓԱԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ԲԱՓԱ) (կամընտիր գրառումները՝ շեղատառերով)

<b>1. ԲԱՓԱ նույնականացման համարը</b>	<b>2. Օրինական տիրապետողի ինքնությունը</b>  Անուն  Հասցե  Երկիր  Արտադրող <input type="checkbox"/> Մատակարար <input type="checkbox"/> Օգտագործող <input type="checkbox"/>	<b>3. ԲԱՓԱ գտնվելու վայրը</b> (օգտագործման կամ պահման), եթե տարբերվում է 2-րդ կետի տվյալներից
		Անուն
		Հասցե
		Ամրակայված օգտագործում <input type="checkbox"/> Պահում (շարժական) <input type="checkbox"/>
<b>4. Գրանցում</b>  Գրանցման մեկնարկի ամսաթիվը	<b>5. Թույլտվությունը</b>	<b>6. ԲԱՓԱ օպերատիվ (ընթացիկ) հսկողություն</b>  Ամսաթիվ

Գրանցումը արխիվ փոխանցելու ամսաթիվը		Ամսաթիվ
		Ամսաթիվ
<b>7. ԲԱՓԱ բնութագիրը</b>	<b>8. ԲԱՓԱ ստացումը</b>	Ամսաթիվ
Ռադիոնուկլիդ	Ստացման ամսաթիվը	Ամսաթիվ
Ակտիվությունը արտադրման կամ առաջին անգամ շուկա հանվելու ամսաթվի դրությամբ	Ումից է ստացվել	Ամսաթիվ
Արտադրման ամսաթիվը	Անուն	Ամսաթիվ
Արտադրող/Մատակարար <sup>1</sup>	Հասցե	Ամսաթիվ
Անուն	Երկիր	Ամսաթիվ
Հասցե	Արտադրող <input type="checkbox"/> Մատակարար <input type="checkbox"/> Այլ օգտագործող <input type="checkbox"/>	Ամսաթիվ
Երկիր		Ամսաթիվ
Ֆիզիկական և քիմիական բնութագրերը	<b>9. ԲԱՓԱ փոխանցումը</b>	<b>10. Լրացուցիչ տեղեկություններ</b>
		Կորել է <input type="checkbox"/> Կորստի ամսաթիվը

<sup>1</sup> Եթե աղբյուրի արտադրողը հիմնադրված է Համայնքի տարածքից դուրս, ապա փոխարենը կարող է ներկայացվել ներկրող-մատակարարի անունը և հասցեն:

	Փոխանցման ամսաթիվը	Գողացվել է <input type="checkbox"/> Գողության ամսաթիվը այո <input type="checkbox"/> ոչ <input type="checkbox"/>
Աղբյուրի տեսակի նույնականացում		
Պատիճի նույնականացում	Ում է փոխանցվել	Գտնվել է ամսաթիվը
ISO դասակարգումը	Անուն	վայրը
ANSI դասակարգումը	Հասցե	Այլ տեղեկություններ
Հատուկ ձևի վկայական	Երկիր	
	Արտադրող <input type="checkbox"/> Մատակարար <input type="checkbox"/> Այլ օգտագործող <input type="checkbox"/>	
	Գրանցված տեղակայանք	